

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 1-Ի N
429-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ
ՆԱԽԱԳԻԾ**

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ
1-Ի N 429-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ և 35-րդ հոդվածների համաձայն և հիմք ընդունելով «Չենքի շրջանառության կարգավորման մասին» օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 1-ի «Քաղաքացիական և ծառայողական գեների և ռազմամթերքի քրեագիտական պահանջները հաստատելու մասին» թիվ 429-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) նախաբանում «Չենքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «թ» ենթակետի» բառերը փոխարինել «Չենքի շրջանառության կարգավորման մասին» օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի» բառերով:

2. Որոշման 10-րդ կետը հանել:

3. Որոշման 23-րդ կետը հանել:

4. Որոշման 19-րդ կետից հետո լրացնել 19.1 կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«19.1 Կառուցվածքով գեներին նմանվող արտադրանքը չպետք է պատրաստված լինի մարտական ակոսափող հրազենից՝ այն ձևափոխելու և կրակելու համար ոչ պիտանի վիճակի բերելու եղանակով:»:

5. Որոշման 2-րդ գլխի վերնագրում, 6-րդ և 7-րդ կետերում «ազդանշանային» բառից հետո լրացնել «սարքի» բառը, 3-րդ, 4-րդ և 8-րդ կետերում «ազդանշանային» բառից հետո լրացնել «սարք» բառը, 5-րդ կետում «գեները»

բառը փոխարինել «սարքը» բառով, իսկ «զենքի» բառը փոխարինել «սարքի» բառով:

6. Որոշման ողջ տեքստում «Չենքի մասին» բառերը փոխարինել «Չենքի շրջանառության կարգավորման մասին» բառերով:

7. Որոշման ողջ տեքստում «սերտիֆիկացման» բառը փոխարինել «համապատասխանության գնահատման» բառերով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ

Ն.ՓԱՇԻՆՅԱՆ

« ___ » _____ 2023թ.

ք.Երևան